Միջագետոց նուաճումն[1]:

(V, 2505).

Ըստ Սայիֆի աւանդութեան Միջագետք նուաճեցաւ 17 թ., իսկ ըստ Ի. Իսհակի՝ 19 թ. յետ Հիջրայի։ Օմար գրեց Սադ Ի. Աբու Վաք-քասին, թէ Ատուած նուաճեց Ասորիք եւ Իրաք մուսլիմների համար, ուստի ուղարկիր քեզանից մի զօրագունդ Միջագետք եւ Նշանակիր նորա վերայ երեքից մէկին՝ Խալիդ Ի. Ուալիդին, կամ Հաշիմ Ի. Օտբային եւ կամ Իյադ Ի. Ղանմին զօրագլուխ։ Սադ՝ ստանալով Օմարի թուղթը՝ ուղարկեց Ղանմին մի գնդով, նորա հետ դնելով Աբու Մուսայ Աշարիին իւր որդու՝ Օմար Ի. Սադի հետ միասին եւ Օսման Ի. Աբու-լ-Աաս Ի. Թիշը Զաքաֆիին. այս բանը տեղի ունեցաւ 19 թ.։

Իյադ արշաւեց Միջագետք եւ պաշարեց Ուռհայ. քաղաքի բնակիչք խաղաղութիւն կապեցին նորա հետ գլխահարկ տալու հիման վերայ. նոյն պայմանով եւ խառանցիք։ Ապա Իյադ ուղարկեց Աբու Մուսայ Աշարիին Մծբին, իսկ Օմար Ի. Սադին՝ Ռասէլայն մուսլիմներից բաղկացած օգնական գնդով. ինքն ընտիր զօրքով գնաց Դարայ եւ պաշարմամբ գրաւեց քաղաքը. իսկ Աբու Մուսայ առաւ Մծբին։ Այս բոլորը կատարեցաւ 19 թ.։

Իյադ ուղարկեց Օսման Ի. Աբի-լ-Աասին Զորրոդ Հայք. այստեղ Սաֆֆան Ի. Մուաթթալ Սուլամին նահատակեցաւ տեղի ունեցած մի ճակատամարտի մէջ։ Բնակիչք խաղաղութիւն հաստատեցին Օսման Ի. Աբի-լ-Աասի հետ՝ իւրաքանչիւր ընտանիքից մի դենար վճարելու պայմանով։

---

1 Այս եւ հետեւեալ հատուածքն Արաբատականի եւ Դարբանդի նուաճման մասին առաջ կը բերեմ քաղուածօրէն, ի բաց թողնելով ինչ ինչ հետաքրքրութիւնից զուրկ մանրամասնութիւններ։